Հայցորդ Արսեն Ալեքսանդրի Բոբոխյանի՝ «Վիշապ» քարակոթողները և դրանց հնագիտական համատեքստը, մասնագիտությունը՝ Հնագիտություն (Է.00.03) թեզի վերաբերյալ պաշտոնական ընդիմախոսի

ԿԱՐԾԻՔ

Ատենախոսությունը պահանջել է գիտության տարբեր բնագավառների՝ հնագիտության, Հին Աշխարհի պատմության, ազգագրության, արվեստի տեսության, մշակութաբանության, հնագույն աշխարհընկալումների, դիցաբանության և պաշտամունքի ու այլ գիտելիքների տիրապետում, նշված բնագավառների սկզբնաղբյուրներն ի մի բերելու և քննական տեսության մեթոդներով մեկնաբանելու հմտություն: Ատենախոսը տիրապետում է ներկայացված նյութին, անձամբ ուսումնասիրել է առկա սկզբնաղբյուրները, միջազգային արշավախմբի կազմում պեղումներ իրականացրել դժվարամատչելի Տիրին կատար հնավայրում: Հետազոտման առարկա կոթողներին ու դրանց հետ առնչվող հնագիտական գտածոներին քաջածանոթ լինելը, տարբեր գիտությունների մեթոդներին տիրապետելը, դրանք սինթեզելու և Հինարևելյան մշակույթների հետ համադրելու արգասիք է այս թեզը:

Հայցորդի առջև դրված առաջնային խնդիրներից էր Հայկական լեռնաշխարհի հնագիտական սկզբնաղբյուրների հսկայական զանգվածից զատորոշել լոկ Հայկական լեռնաշխարհին հատուկ ոլորտներից մեկը, որը ներառում է հնագիտության, դիցաբանության և արվեստի բնագավառները՝ վիշապաքարեր կամ վիշապակոթողներ կոչված մեգալիթյան հուշարձանները: Իր առաջ ծառացած խնդիրները լուծելու համար հեղինակը պետք է տիրապետեր ինչպես Հայկական լեռնաշխարհի, այնպես էլ հինարևելյան տարածաշրջանի հնագիտական ժառանգությանը, քարտեզագրեր, ըստ տիպերի և կերտվածքների դասակարգեր, իմաստաբանական առանձնահատկությունների վերլուծեր բարձրադիր լեռնային գոտիներում սփռված վիշապակոթողները, պարզեր տեղահանված և այլ վայրեր տեղափոխված տասնյակ կոթողների նախնական վայրերը:

Աշխատանքն ամփոփում է վերջին տասնամյակում իրականացված դաշտային, լաբորատոր և արխիվային հետազոտությունների հիմնական արդյունքները: Գիտական գրականության մեջ, մամուլում, արխիվային նյութերում և հուշարձանների ցանկերում առկա տվյալներն ի մի բերելով կազմվել է Հայաստանի Հանրապետության տարածքում առկա վիշապակոթողներ կոչվող մեգալիթյան գրեթե բոլոր կոթողներն ընդգրկող շտեմարան: Կարևորում ենք մասնավորապես բոլոր հայտնի կոթողների քարտեզագրումը և դրանց ֆիզիկաաշխարհագրական միջավայրի մանրամասն ներկայացումը:

Վավերագրվել, նկարագրվել և տիպաբանական վերլուծության են ենթարկվել բոլոր հայտնի քարակոթողներն ըստ իրենց ձևաբանական ու իմաստաբանական յուրահատկությունների: Ատենախոսն իր աշխատությունում ներկայացրել է 115 վիշապակոթող, որոնք ներկայացվել են ոչ միայն բարձրորակ լուսանկարների, այլև գրչանկարների միջոցով, որոնք ընկալունակ են դարձնում նույնիսկ հողմնահարված և եղծված կոթողները: Սրանցից կեսից ավելին, շուրջ վեց տասնյակ վիշապակոթող առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ, ինչն ինքնըստինքյան մեծ ներդրում է հայագիտության բնագավառում: Չափազանց կարևոր է ժայռապատկերներով վիշապակոթողի գյուտը Տիրին կատարում, որը ոչ միայն վիշապակոթողների, այլև ժայռապատկերների թվագրման համար ունի կարևոր նշանակություն:

Հայցորդը խորին հարգանք տածելով իրենից առաջ կատարված հետազոտություններին և դրանց հեղինակներին, միևնույն ժամանակ առաջ է քաշել մի շարք նոր մոտեցումներ, բանավեճի է բռնվել իրենց դարն ապրած կամ վիճահարույց տեսակետների հետ, առաջադրել թարմ և համարձակ մտքեր: Այս ամենն, անխոս, հեղինակի բարեխղճության, գիտական էթիկայի չգրված օրենքների պահպանման, հայրենական և գերմանական ակադեմիական ավանդույթներով կրթված լինելու վկայություն է:

Ատենախոսությունը շարադրված է հստակ և տրամաբանական ձևակերպումներով, հնագիտական և արվեստաբանական եզրերի լայն կիրառմամբ: Անդրադարձ է կատարվել նաև սիմվոլիկ մտածողության զգայա-էսթետիկական, պաշտամունքային, ծիսահմայական ոլորտներին, որոնք առնչվում են վիշապակոթողների վրա եղած զարդապատկերներին, վիշապակոթողներին բնորոշ տարածականության և հեռանկարի, հանդիսավոր-ստատիկ կերպարների ընկալմանը:

Տրամաբանական է ատենախոսության կառուցվածքը: Արծարծվող թեման ավելի ընկալելի դարձնելու համար հեղինակը ներկայացնում և ամփոփում է վիշապակոթողների շրջափուլի պատմական իրավիճակը և մշակույթը, որը ծնել և սնել է, ուղղորդել և իմաստավորել է այդ ժամանակի համար ընդունված աշխարհընկալումներից, դիցաբանական, խորհրդապաշտական ու ծիսահմայական պատկերացումներից ծագած վիշապակոթողների լայն կիրառությունը:

Ատենախոսությանը հիմնավորվել է նաև տեխնիկական և ճշգրիտ գիտությունների մեթոդների կիրառմամբ: Այս մոտեցումներն է՛լ ավելի վստահելի ու արժեքավոր են դարձրել կատարված աշխատանքը: Հիմնարար գիտությունների բնագավառում երկարատև աշխատանքի փորձը հնարավորություն է ընձեռել հեղինակին ամբողջությամբ

ներկայացնել Հայկական լեռնաշխարհի հնագույն կոթողներին նվիրված այս ամփոփ աշխատությունը: Այստեղ զգալի տեղ ունի նաև հեղինակի պեղումների և դաշտային հետազոտությունների շնորհիվ ձեռք բերված նոր տվյալների, մասնավորապես Տիրին կատարում և այլ հնավայրերից հայտնաբերած վիշապակոթողների վերլուծությունը:

Ատենախոսությունը բաղկացած է չորս տարբեր, միմյանց լրացնող գրքերից: Հիմնական տեքստը կազմված է ներածությունից, հինգ գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության և արխիվային նյութերի ցանկից: Երկրորդ հատորը՝ հավելվածներից մեկը տեքստային շտեմարան է, հագեցված աղյուսակներից: Երրորդ հատորը ներկայացնում է գրչանկարներն ու լուսանկարները: Չորրորդ հատոր-հավելվածում զետեղված են տեղագրական հանույթներն ու քարտեզները:

Աշխատության հիմնական՝ տեքստային հատվածը բաղկացած է ներածականից, հինգ գլուխներից, գրականության և արխիվային նյութերի ցանկից: Ծավալուն հավելվածներում ներկայացված են թեմայի հետ առնչվող պատկերներ՝ լուսանկարներ, գրչանկարներ, քարտեզներ, հանույթներ, հատակագծեր, գծագրեր, աղյուսակներ: Վերջիններս էլ ավելի են հիմնավորում հեղինակի վերլուծական դիտարկումները:

Առաջին ենթաբաժնում անդրադարձ կա երկրաբանական և կլիմայական իրավիճակին, ֆլորային և ֆաունային, որոնց միջավայրում ձևավորվել է քննարկվող ժամանակաշրջանի աշխարհագրական այն միջավայրը, որտեղ ապրել ու արարել է մարդը, ստեղծել պաշտամունքի ու արվեստի վաղնջական գործեր:

Ա գլխի երրորդ ենթագլուխն աչքի է ընկնում խոր և հանգամանալից վերլուծությամբ: Կատարվել են մի շարք նոր դիտարկումներ և կարևոր գիտական եզրահանգումներ:

Ա գլխի չորրորդ ենթագլուխը նվիրված է մշակույթին, որտեղ արձանագրվել են «ալեհեր» անցյալում ստեղծված ճարտարապետական կոթողներ, քանդակագործության տպավորիչ նմուշներ և փորագիծ պատկերագրություն:

Բ գլխի առաջին ենթագլխում քննության են առնվել հայկական բանահյուսության նմուշները: Բ գլխի երրորդ ենթագլխում քննության են առնվել այս ժամանակաշրջանի կառույցների ճարտարապետական հորինվածքների առանձնահատկությունները, կացարանների շինարարության սկզբունքները և դրանց կապը վիշապակոթողների հետ:

Գ գլուխը նվիրված է ծավալատարածական ոճով կերտված արձաններին: Առկա են ինքնատիպ մոտեցումներ, որոնք նոր խոսք են հայ ճարտարապետության ուսումնասիրության բնագավառում: Վիշապակոթողների զարդարվեստին նվիրված ենթաբաժնում կանոնակարգվել են շուրջ մեկ հազարամյակ տևած զարգացումները,

բացահայտվել են ժամանակագրական առանձնահատկությունները, վիշապակոթողների արխիտեկտոնիկան, համաչափությունները, մակերեսների ներդաշնակությունը, անդրադարձել է վաղ բրոնզի դարում վիշապակոթողների կերտման խնդիրներին: Առաջ են քաշվել նորովի մեկնաբանություններ դրանց պատկերագրության, Հայկական լեռնաշխարհի կոթողային քանդակագործության վերաբերյալ:

Քննական վերլուծության են ենթարկվել «վիշապ» կոչված քարակոթողները՝ հնագիտական նորահայտ տվյալների, զարդերի և պատկերների իմաստաբանության՝ նախկինում առաջադրված տեսակետների վերլուծության հիմամբ:

Բազմաբովանդակ այս ատենախոսությունում առանձնապես կարևորում ենք վիշապակոթողներին և խեցեղենի համադրությանը նվիրված գլուխը:

Ատենախոսությունը կոչված է լրացնելու և ամբողջացնելու հնագիտության վաղնջական շրջափուլի բացը: Լինելով վիշապակոթողներին նվիրված առաջին ամփոփ աշխատությունը, բնականաբար այն զերծ չէ որոշ բացթողումներից, առանձին բնագավառների ոչ խոր վերլուծություններից:

Աշխատանքում առկա են նաև վիճահարույց և դեռևս ամբողջությամբ չլուսաբանված խնդիրներ: Այսպես, եթե վիշապակոթողների ժամանակագրական ընդգրկումը հիմնավորված է մի շարք ռադիոածխածնային տարրալուծումների արդյունքներով, ապա աշխարհագրական սահմաններն աբողջությամբ չեն ընդգրկում այս կոթողների տարածման, մասնավորապես Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող տարածաշրջանները, ինչպիսիք են Ջավախքը, Արցախը, Կարսի և Կարնո սարահարթերը, Վանա լճի ավազանը և այլն: Հայաստանի հանրապետության սահմաններից դուրս գտնվող վիշապակոթողները չեն ներկայացվել նույնքան հանգամանալից, որքան մեր հանրապետության սահմաններում գտնվողները, թեև դրանց մասին հայցորդն անդրադարձել է 2-րդ գլխում: Մինչդեռ որոշակի է, որ վիշապաքարերը եղել են մեկ ընդհանուր էթնոմշակութային ամբողջության գործունեության, կրոնական, ծիսական ու գեղարվեստական ընկալումների արգասիք, ընդհանրություն, որը չի «ճանաչել» այսօրվա քաղաքական և պետական սահմանները, գոյություն է ունեցել որպես անկախ և օբյեկտիվ իրողություն:

Կարծում ենք վիճահարույց է վիշապակոթողների երեք տիպերի բաժանման սկզբունքը: Եթե ավանդաբար կիրառվող այունաձև և ձկնակերպ վիշապակոթողները արտոցոլում են հուշարձանների կերտվածքը և կառուցվածքը, ապա ցլակերպ վիշապակոթողներ մեզ հայտնի չեն: Հարթաքանդակ, բարձրաքանդակ, առանձին դեպքերում ցայտաքանդակ ցլերի գլուխներով, մորթով և անկյանք վերջույթներով

համալրված վիշապակոթողները չունեն ցուլերի կերպավորում: Ցլերն այստեղ հանդես են գալիս որպես մաս և ոչ թե որպես ամբողջություն, հետևաբար առավել ճշգրիտ կլինի ցլերի գլուխներով վիշապակոթողներն անվանել ոչ թե ցլակերպ, այլ՝ ցլազարդ: Եվ ընդհանրապես պետք է դեռևս անհրաժեշտ է կենդանաբանական դիտարկումներով հիմնավորել, թե արդյո՞ք վիշապ աստվածություններին մատուցած զոհաբերություններ խորհրդանշող այդ կենդանիները միայն ցուլեր են, թե դրանցում պատկերվել են նաև կովեր և այլ կենդանիներ: Մի երևույթ, որը չափազանց տարածված է եղել հնագույն կրոնական հավատալիքներում և արտացոլված են գրավոր աղբյուրներում:

Չորրորդ հատոր-հավելվածում զետեղված տեղագրական հանույթներն ու քարտեզները ավելի ընկալելի կլինեին, եթե դրանց լեգենդներում ավելի հանգամանալից ներկայացվեին պայմանական նշանները:

Շարունակենք: Հեղինակը նշում է. «Այսպես, օրինակ, կարելի է ենթադրել, որ Շենգավթի կամ Մոխրաբլուրի վաղբրոնզեդարյան կոթողները կարող էին լինել սյուն-օբելիսկների կամ վաղ միջնադարյան կոթողների հիմքը» /էջ 15/: Վիճահարույց եզրակացություն է. նախ պետք է գրել ոչ թե Շանգավթի կամ Մոխրաբլուրի, այլ և Շենգավթի, և Մոխրաբլրի, քանզի կամը ենթադրում է, որ կոթողը մեկն է և պատկանում է կամ Շենգավթին, կամ՝ Մոխրաբլրին: Երկրորդ, որոշակի է, որ դրանք զոհասեղաններ էին, կամ տաճար-աշտարակների վրա կանգնեցված ֆալլոսատիպ պաշտվող կոթողներ:

Մյուս մեջբերումը. «Սակայն, հաճախ հաշվի չի առնվում կանգուն քարերի համաժամանակյա լինելու կամ սոցիալական տարբեր խավերին պատկանելու հնարավորությունը: Այսպես, հասարակական ներուժի ներդրում պահանջող այնպիսի բարդ ձևեր, ինչպիսիք են «վիշապ» քարակոթողը, օբելիսկը կամ պուլուսին, կարող էին լինել վերնախավի կամ պետական մարմնի, իսկ ավելի պարզ ձևերը, օրինակ, մենհիրները՝ ժողովրդական պաշտամունքի առարկա»: էջ 15: Մեր կարծիքով և՛ վիշապակոթողները, և՛ մենհիրները համաժողովրդական պաշտամունքի առարկաներ էին: Դրանք պաշտվել են հասարակության բոլոր խավերի կողմից: Անհնար է պատկերացնել, որ վիշապակոթողները պաշտել են միայն վերնախավի ներկայացուցիչները, իսկ մենաքարերը՝ հասարակ ժողովուրդը: Այլ հարց է, որ վիշապակոթողները կարող էին կերտվել միայն վերնախավի առկայության և պատվերի պայմաններում, իսկ մենաքարերը կարող էր կանգնեցվել համայնքի ջանքերով:

Հեղինակը հանգամանալից և քրտնաջան աշխատանք է կատարել «ՎԻՇԱՊ» ՔԱՐԱԿՈԹՈՂԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ գլխում, որտեղ ի մի է բերել մինչ այժմ շրջանառվող գրեթե բոլոր տեսակետները. ա/ Մենհիրի և «վիշապ» քարակոթողի հարաբերակցության

հարցը, բ/ Վիշապոիդ հասկացությունը, գ/ «Վիշապ» քարակոթողի սահմանումը, դ/ «Վիշապ» քարակոթողների անվան հարցը. Ժողովրդական անվանումներ, Պատմական անվանումներ, Վերակազմված անվանումներ, Անվան և բնույթի հարաբերակցության խնդիրը, ե/ «Վիշապ» քարակոթողների միջավայրում հանդիպող բնական և մարդաստեղծ այլ միավորների սահմանումը. Բնական ուղենիշներ, Ազգագրական հուշարձաններ, Հնագիտական հուշարձաններ: Այնուամենայնիվ այստեղ առկա են որոշ վիճահարույց եզրակացություններ: Անընդունելի է Աժդահա /Աժդահակ/ բառը, ինչ-որ կասկածելի աղբյուրի հիման վրա, ադրբեջաներենի հետ աղերսելը /էջ 19/: Մինչդեռ այս բառը դեռևս հնագույն շրջանից շրջանառվել է տեղաբնիկ ժողովուրդների մոտ, նախքան ադրբեջանցիների ի հայտ գալը: Այսպես, Զենդ Ավեստայում Աժդահակը հիշատակվում է որպես Աժի Դահակ անվամբ: Աժդահակի առասպելը 5-րդ դարում հիշատակել է Մովսես Խորենացին, ով առասպելական կերպարը ներկայացնում է և՛ որպես մարաց թագավոր, և՛ որպես վիշապ: Այս աղբյուրներն առնվազն 10 դար և ավելի վաղ են թուրքական ցեղերի Առաջավոր Ասիայում հայտնվելուց և որոշակի է, որ Հայաստանում հաստատված մահմեդական ցեղերը, որոնց միայն 20-րդ դարում են անվանել ադրբեջանցիներ, որևէ կերպ չեն կարող աժդահակ տերմինի հետ հեղինակային իրավունքով առնչվել:

Հակասական է վիշապակոթողների թիքմաթաշ բառի թուրքերեն մեկնաբանությունը, որն իբր հանդիպում է հաճախ /թիքմաթաշ անվանումը հանդիպում է միայն 5 կոթողներում, որը 115 կոթողների դեպքում չի գերեզանցում նույնիսկ կոթողի անվանումների 5 %-ը/, բացի այդ հեղինակն ինքն այս անվանումը թուրքերեն համարելուց անմիջապես հետո հղում է Ատրպետի տեսակետը, որ այս տերմինի հիմքում հայերեն դիք/ցից արմատն է:

Կարծում ենք, Բնական ուղենիշներ ենթագլխում կիրառված հասկացությունները. «ջրային պաշար (ջրի բնական ելուստ՝ գետի ակունք և աղբյուր, ձնհալից ձևավորված լճակ, ճահիճ և տեղային գետակ) /էջ 24/, անհրաժեշտ է համալրել արհեստական լճակների և ոռոգման առվակների հասկացություններով, քանզի Արագած լեռան և գեղամա լեռներում վիշապակոթողները կանգնեցված են եղել ոռոգման համակարգերի հարևանությամբ:

Համալիր ուսումնասիրության համար կիրառվել են բազմաբնույթ բնագիտական հետազոտություններ, մասնավորապես. Երկրաֆիզիկական հետազոտություններ, Երկրաքիմիական հետազոտություններ, Մանրէաբանական վերլուծություններ, Հնաբուսաբանական վերլուծություններ, Հնակենդանաբանական վերլուծություններ, Վանակատի վերլուծություն, Ծաղկափոշու վերլուծություններ, Կայուն իզոտոպների վերլուծություն, Հնագենետիկական հետազոտություններ, Ռադիոածխածնային թվագրություն և այլն, որոնց բազմազանությունը և ներգրավված առաջնակարգ

համալսարանների ու մասնագետների ներգրավումը, իրենց ամբողջական բնույթով նոր խոսք է հայ հնագիտության բնագավառում և էական նշանակություն ունեն հիմնավորելու առաջադրված տեսակետները: Մեր կարծիքով վիճահարույց է այն հետևությունը, որ մեր տարածաշրջանում «մոտ 6000 տարի առաջ վայրի կովերի տեսակներ չեն ապրել», մինչդեռ Արուճի 2-րդ և Ներքին Նավերի 7-րդ դամբարաններում, առկա են եղել տուրի /վայրի ցլի/ զոհաբերություններ /բնորոշումները Հանս-Պիտեր Ուերպմանի/:

Մեկ այլ խնդիր. «Քարակոթողների առաջարկվող տիպաբանությունն իրականացնում ենք ըստ՝ 1. պատկերի, 2. պատկերի քանդակման եղանակի, 3. քարակոթողի մշակման ոճի, էջ 84»: Մեր կարծիքով պատկերի քանդակման եղանակը և քարակոթողի մշակման ոճն առնչվում են կոթողի կերտման տեխնիկայի, և ոչ թե տիպաբանության հետ:

Հեղինակը գրում է. «Ըստ պատկերի քանդակման եղանակի՝ քարակոթողները բաժանում ենք չորս ենթատիպի՝ 1. ռելիեֆ՝ ուռուցիկ ցածր (հարթաքանդակ, երբ ուռուցիկ պատկերն իր ծավալի կեսից ավելին դուրս չէ ցցված ֆոնի հարթությունից), 2. ռելիեֆ՝ ուռուցիկ բարձր (բարձրաքանդակ, երբ ուռուցիկ պատկերն իր ծավալի կեսից ավելին դուրս է ցցված ֆոնի հարթությունից), 3. ռելիեֆ՝ ուռուցիկ ցածր (հարթաքանդակ)՝ քարակոթողի բոլոր հատվածները, բացի գլխից, և ռելիեֆ՝ ուռուցիկ բարձր (բարձրաքանդակ)՝ միայն քարակոթողի գլխամասը, 4. ներգծում, երբ ռելիեֆը կարծես ներգծման միջոցով է ստեղծվում»: էջ 84-85: Կարծում եմ ավելի ճիշտ կլիներ, եթե քանդակները ստորաբաժանվեին դասական սկզբունքով՝ ռելիեֆ – հարթաքանդակ, բառելիեֆ – բարձրաքանդակ և գոռելիեֆ – ցայտաքանդակ:

Մեկ այլ վիճահարույց եզրակացություն. «Հսկայի տները մեծ և միջին չափի քարային հոծ լիցքով և ներքին քարաշար սրահով շրջանաձև կառույցներ են՝ հաճախ քարային ճառագայթաձև ելուստներով: Արտաքուստ նմանություն ունեն դամբանաթմբերին, բայց, ի տարբերություն վերջինների, սրանք կենտրոնում ունեցել են սրահ կամ թաղակապ կառույց և եղել են ոչ թե թաղումներ, այլ մի տեսակ «սրբարաններ» կամ աշտարականման կառույցներ», էջ 124: Կարծում ենք հիմնավոր չէ այս կառույցների զատորոշումը դամբարանային միջավայրից, քանզի «Հսկաների տների» հարյուրավոր օրինակներ են հայտնի, որոնք ունենալով Տիրին կատարի նկարագրված տեսքը և կառուցվածքը, եղել են դամբարաններ: Այսպիսի դամբարաններում հաճախ իրականացրել են իջեցուկ թաղումներ, որոնց հետևանքով դամբարաններում փաստվել են ինչպես բրոնզի, այնպես էլ վաղ երկաթի դարերի արտեֆակտներ: Կարծում եմ, պետք է ավելի զգույշ մեկնաբանել այս կառուցների ֆունկցիոնալ նշանակությունը:

Երրորդ գլխում ատենախոսը գրել է. «Տամգայատիպ նշանները ցեղային պատկանելություն ցույց տվող երկրաչափական փորագիր պատկերներ են, որոնք ի հայտ են գալիս հնագիտական մեկ միավորի՝ մոտ 2 մ N 1 «վիշապ» քարակոթողի մակերեսին, որը Տիրինկատարի սրբազան լանդշաֆտի հարավարևմտյան հատվածում է: Թվագրվում են, հավանաբար, XII-XV դդ.»: Մեր կարծիքով այս նշանները զարգացած միջնադարով թվագրելու համար անհարժեշտ է ունենալ ավելի լուրջ հիմնավորումներ:

Նշված դիտողությունները փոքր-ինչ չեն նսեմացնում կատարված աշխատանքի արդյունքը, դրանք ավելի շատ խորհուրդներ են հեղինակին հետագայում գրքի հրատարակության ժամանակ նկատի առնելու համար: Հայցորդ Արսեն Ալեքսանդրի Բոբոխյանի «Վիշապ» քարակոթողները և դրանց հնագիտական համատեքստը ատենախոսությունը երկարատև պրպտումների և տասնյակ տարիներ տևած քրտնաջան աշխատանքի արդյունք է: Այն կարևոր և էական նվաճում է հայ հնագիտության բնագավառում, որը կարևոր նշանակություն կարող է ունենալ ընդհանրապես հայագիտության առաջընթացի համար:

Ելնելով կատարված բարեխիղճ աշխատանքի գիտական արժանիքներից միջնորդում ենք, որպեսզի հարգաժան մասնագիտական խորհուրդը հայցորդ Արսեն Ալեքսանդրի Բոբոխյանին շնորհի պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, պատմական գիտությունների թեկնածու՝ Հակոբ Երվանդի Սիմոնյան

10.12.2024 թ.

Հաստատում եմ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի գիտական քարտուղար

Թագուհի Ռուբիկի Ավետիսյան